

ԳՐԻԴՈՐ ԽԱՂԱԹՅԱՆԻ ԱՆՏԻՊ ԴԱՄԱԿՆԵՐԸ ԿԱՐԱՊԵՏ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ

Հայադեո Գրիգոր Արրահամի Խալաթյանը (1858—1912) ուսանել է Լադարյան ճեմարանում և ապա Մոսկվայի համալսարանում: Շուրջ 30 տարի հիշյալ ճեմարանում վարել է տեսչի, դիրեկտորի և պրոֆեսոր-դասախոսի պաշտոններ: Խալաթյանն իր դիտական գործունեությամբ նպաստել է հայ ազգագրության, պատմագիտության և աղբյուրագիտության առաջընթացին. անփութիւիս խմբագիրն էր «Էմինյան ազգագրական ժողովածուի»:

Խալաթյանը նամակագրական կապեր է ունեցել հայ ու օտար բազմաթիվ նշանավոր գիտնականների, գրողների ու այլ գործիչների, այդ թվում և՛ Կարապետ Կոստանյանի (1853—1920) հետ: Կոստանյանը հմուտ հայագետ է: և մանկավարժ: Որպես ուսուցիչ և տեսուչ պաշտոնավարել է Գեորգյան ճեմարանում, Ներսիսյան դպրոցում և Լադարյան ճեմարանում: Հայ միջնադարյան բանաստեղծության ուսումնասիրողի առաջին պատիվը պատկանում է Կարապետ Կոստանյանին: Նա ունի շուրջ 40 հայագիտական ուսումնասիրություն:

Հրապարակվող նամակներում արժարժված հարցերը և փաստերը լուսաբանում են երկու գիտնականների կյանքի և հայագիտական գործունեության անհայտ մնացած շատ կողմեր:

Փաստաթղթերը պահվում են Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի Կ. Կոստանյանի արխիվում (№№ 938, 939, 946, 948, 949):

Վ. Գ. ՎԱՐԿԱՆՅԱՆ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1

Հարգելի բարեկամ

պարոն Կարապետ

Նրկու ամսից ավելի է, որ՝ համաձայն Ձեր խնդրանս՝ ուղարկել եմ Ձեզ մի ծրար էմինի շարագրություններից մի քանիսը՝ և մի նամակ, բայց մինչև այսօր ոչինչ տեղեկություն չունեմ Ձեզանից. չգիտեմ՝ հասնո՞ւ են արդյոք տեղ ուղարկածներս, թե ոչ: Հուլիսով եմ կշտապեք հանդատացնել ինձ Ձեր պատասխանովը:

Ներկա նամակիս նպատակը մի խնդիր է, որ հուլիսով եմ անտես առնելու չեք, մանավանդ, որ դա շատ կարևոր է, հարկավոր է Ս. Էջմիածնա Մատենադարանի ձեռագրերից արտագրել «Տեսիլ» Ս. Գրիգորի Լուսավորչի մերոյ...» անվավեր ավանդությունը (апокриф) և որովհետև այդ «Տեսիլքը» (գոնե էջմիածնա Մատենադարանում) երեք խմբագրություն ունի, ուստի անհրա-

ժեշտ է արտագրել ղոցանից ավելի բնտիրը՝ թե ուձի և թե ուղղագրության կողմանէ և պատահած տարաձայնությունները (երեքի մեջ) նշանակել ստորեկամ լուսանցքում: Անկասկած. Դուք այնքան ազատ միջոց չեք ունենալ այսպիսի պարապմունքի համար— ես գիտեմ. որքան թանկ է պարապող մարդու ժամանակը,— վասն որո խնդրեմ հանձնեք այդ աշխատությունը Ձեր բարձր գոտարանց աշակերտներից մեկին և կամ այնպիսի անձին. որ կարողանար օշառությամբ կատարել այս գործը՝ հայտնի բան է. մի քանի ուրիշ վարձատրությամբ:— Ես ուզում էի առաջ ուղղակի ներսես Եպիսկոպոսին՝ գիմել. որո հետ իմ էջմիածին եղածս ժամանակ պատիվ ունեցա ծանոթանալ.— բայց մտածելով, որ մի գուցե ձանձրություն պատճառեմ Սրբապետին և մեկիլ՝ որ լթե հարկ լինի՝ դուք ևս կարող եք գիմել նոռան Ձեր կողմից.— վճոնցի Ձեզ գրելու նամակս:

Հատուկ խնդրեմ անհապաղ իմաց տաք ինձ արդյոք կարելի՞ է հուսալ. որ Լուսավորչի «Տեսիլքը» կարտագրվի և կուղարկվի ինձ՝ համաձայն իմ խնդրի:

Ընդ սմին ուղարկում եմ Ձեզ էջմիածնա Մատենադարանի երեք ձեռագիր թվահամարները, ուր ամփոփված են «Տեսիլքի» երեք խմբագրությունները:

Հոգով ցավեցա իմանալով, մեր Հակոբ Տիգրանյանցի հոր վախճանվելը. չգիտեք, ի՞նչ է անում այժմ Հակոբը և ինչ է մտադիր անելու. ափսոս: Եթի Հալկին նամակ գրելու լինեք՝ խնդրեմ իմ ողջույնս հաղորդեր նորան:

Անհամբերությամբ սպասելով Ձեր պատասխանին
մնամ միշտ պատրաստակամ

Ձեր անձնվեր Ի. Խալաթյան

1882 թ. 7 մարտի

Մոսկվա:

2

Պատվական բարեկամ

Ցավոք սրտի իմացա այն տխուր պատահարի՞ մասին. որ ղզրդեցնելով էջմիածնա ձեմարանը և Սրբավայրը, ղզրդեցույց և ծանր վիշտ պատճառեց ամենուրեք ճեմարանից առաջագիմություն մաղթող և ցանկացող անձանց սրտերը: Տա աստված, որ այդ վերջին փորձանքը լինի ուսումնարանի դիրին և նա դարձյալ խաղաղ առաջ տանի յուր լուսավորության գործը՝ առանց ուշադրություն դարձնելու հայտ ու գաղթ թշնամյաց վերա, որոնց մասը այս վերջին շփոթությանց մեջ բավական նշմարելի է: Ես այսքան գիտեմ, ուսման և քանիք անհրաժեշտ է համակրությունը Ձեր խմբի՝ կողմն է. ուստի առանց այլեւայլու աներկյուղարար գործելու է:— Թեպետ «Արձագանքում» հրատարակումս «նամակ» բավական մանրամասնորեն է նկարագրում գործի բնթացքը. բայց անշուշտ կան և այնպիսի հանգամանքներ, որո գիտամբ լուծություն տված են և որոց մասին Ձեր կարծիք հազորդելը շնորհ արեք ինձ:

Հետ այնորիկ՝ կդառնամ գրությանս բուն նպատակին. հատուկ կխնդրեմ Ձեզմեն, եթե հնար է ձեռք բերել ինձ համար և անհապաղ ուղարկել սուղջիկա հրատարակությունը Ս. էջմիածնի:—

1. Չամբո— 1 թ.⁵

2. Դաշնագիր⁷— արդյոք այս՝ «Դաշանց-Թուղթ» անվամբ հռչակյալ ան-
վան իր դրվածքը չէ՞։ Արժեքը անհայտ է ինձ։

3. Շնորհալու ընդհանրական⁸—։ —նույնպես։

4. «Արաատ» ամսագրի չեմ հիշում ո՞ր թվականին և ո՞ր համարներում
ստղծված է, կարծեմ, հանգուցյալ Կարենյանցի հետադոտությունք «Դա-
շանց-Թղթի» մասին։

Այդ նամատները՝ եթե հնար է, ձեռք բերելու է Կան և այլ հրատարակու-
թյանի կարեսոր, բայց սոքա առ ալժամ անհրաժեշտ են. ուստի կրկին անգամ
կիսնորեմ կարելույն չափ շտապեցնել սոցա ուղարկելը՝ հոգալով նոցա ծախ-
քը Զեյ մոտ մնացած 7 ոտբլուց, որով մեծապես կպարտավորեցնեք ինձ։

Անշուշտ տեսած կլինիք մեր ուսանող Պ. Հարությունյանցին, որ այնպես
տնականկալ կերպով ստիպված էր թողնել անհյուրընկալ հյուսիսը, հաղորդե-
ցիկ ինչորեմ նորան իմ ողջունս։ Ի՞նչ է անում. ինչպես է առողջությունը.
սպասարկում է արդյոք հայերենով, ինչպես այստեղ խոստացավ։ Լավ երիտա-
սարդ է. սշխատելու է, որ օրինավոր ճանապարհով ընթանա նորա ուսումը։
Իրոք դուր չեք խնայել՝ աղատ ժամերիդ խորհուրդներ տալ և դիտողությու-
նեք տնել առհասարակ նորա պարապմուն և մասնավորապես հայոց լեզվի և
մատենագրության ուսումնասիրության մասին, որին շատ փափագում էր։

Նամակ դրելուս՝ ինչորեմ ողջունեցեք արժանապատիվ Տեք Հորր¹⁰, որիւ
ստողություն և երկար կյանք կմաղթեմ. Հայկին¹¹ և այլոց մերոց մտերմացի
Հմուտանար հիշել ողջունս և Ձեր բնականաց։

Ընդունեցեք խորին հարգանքս և համակրությունս

Ձեր միշտ բարյացակամ Գր. Խալաթյան

1883 թ. 15 դեկտ.

Մոսկուա

Հ. Գ. Նամակ կամ ծրար ուղարկելուս՝ ուղղեցեք Լաղարյան Ճեմարանի
Լիկեոնը։

3

20 հունվարի 1900 թ.

Մոսկվա

Մեծարգո բարեկամ.

Ձեր դարկելով «էմինյան Աղգադրական ժողովածուի»¹² հրատարակու-
թյան՝ խմբագրությունը պատիվ ունի դիմել Ձեզ և Ձեր աջակցությունը խնդ-
րել այդ գործում՝ համաձայն յուր ծրագրին¹³ և հայտարարության, որից այ-
սու ուղարկվում է Ձեզ մի քանի օրինակ։

Խմբագրությունը մասնավանդ շնորհակալ կլինի Ձեզ, եթե դուք հաճեք
րացի այլ և այլ դուտ աղգադրական նյութերից, ուղարկել իրեն հատկապես
հայ գրչագիրներից քաղած ուղագրավ հատվածներ՝ վերաբերյալ Հայ ժողո-
վրդական ավանդություններին, մտապաշտություններին և աշուղական րա-
նաստեղծություն, որպես և անվավեր գրվածքներ, ուր դարձյալ ժողովրդա-
կան ավանդություններ են նկատվում։ Զբաղվելով երկար տարիներ հայ գրո-

չագիրներով գուր անշուշտ կունենաք նոցա մեջ մեզ հետաքրքրող հոգւածներ, թեղ որ նոքա կարճ լինեն անտուն և կցկտուր:

Նույնպես կպարտավորեցնեք խմբագրությանը եթե հանձն առնում որևէ ազգագրական՝ արդեն լույս տեսած (հին թե նոր) գրվածքի մասին հոգւած կամ նկատողություն պատրաստել «Ժողովածուի» համար:

Սրանից զատ հատուկ կիսդրվի ամեն կերպ տարածել մեր ծրագիրը Չիր ծանոթների և նախկին աշակերտների շրջանում, որոնք ազգագրությամբ են զբաղվում, հանձնարարելով՝ որ նյութեր ունեցողները ուղարկեն նոցա խմբագրություն:

Հնդունեք անկեղծ հարգանքներս.
Մնամ Ձեր անձնվեր Դր. Խալաթյան

2. Գ. Արդեն տպագրության է պատրաստված ժողովածու Ա հատորը¹⁴:

4

Մեծարգո բարեկամ.

Ձեր «Հայագիտությունը Արևմտյան. Եվրոպայում»¹⁵ շնորհակալությամբ ստացա և հաճությամբ կարդացի՝ մի քանի օր տկարությանս պատճառով տանից դուրս չգալուս միջոցին: Արդարև, կարող է առաջնորդ լինել նույն նյութով զբաղվողին (ափսոս, վրիպակներից աղատ չէ գրացուցակը): Բայց ո՞ր են այդպիսիք, ո՞վ է հետաքրքրվողը հայագիտությամբ. ներկա ուսանողությունը մեր ժամանակի ուսանողության նման չէ և այսպիսի հրատարակությունները, դավ է ասել, աննկատելի են անցնում նրանց համար:

Առ այժմ կիսդրեի ուղարկել մեր մատենադարանի համար 2 օրինակ՝ վերադիր վճարելով проф <есор> Мух <асл> Осипов-Аттаян, библиотекар Лазаревского института, Москва.

Գր. Մադիստրոսի¹⁶ վաճառումը սիրով կհանձնեի տեղիս գրավաճառներին, բայց այստեղ հայերեն գրքեր չեն հանձն առնում վաճառելու:

Հնդունեցեք ամանորի առթիվ ջերմ ողջույններս և նույնը հաղորդել հաւանցեք Մեծ Տիկին Տիրուհուն¹⁷:

Ձեր՝ Դր. Խալաթյան

31 դեկտ. 1910

Մոսկուա, Լազ<արյան> ձև<արան>

2. Գ. Մեր ձեմարանի հայտարարությունը Գ. Քսենյանի մրցանակի¹⁸ մասին՝ հուսամ ստացաք:

5

Սիրելի բարեկամ.

Ստացա Ձեր նամակը մեր համաքաղաքացի ուսանող Մկրտիչ Հարությունյանցի ձևումը: Շնորհակալ եմ այն համակրության համար, որ հայտնել էիք զրբիս¹⁹ մասին, մի կարծիք, որ սիրելի էր ինձ լսել հայ մասնագետից:

Յուր մի քանի արժանավորության հետ՝ աշխատությունս անշուշտ պակաս չէ և թերություններից. բայց նոցա մեջ մեկը մանավանդ ծանր է թվում՝

իմ աշխուժ, որովհետև սա կարող էր ավելի լավ մշակած լինել, քան թե այժմ էր տեսնում. այդ՝ դրբիս վերջին հատվածն է— «Տեսիլ Ս. Սահակա»։ Ձեզ հատնի է, որ դեռ անցյալ ձմեռ աշխատում էի նյութեր ժողովել այդ հատվածի համար. Ձեզ էլ դիմեցի՝ խնդրելով ուղարկել 6 օրինակ «Տեսլյան» պատճենները։ Քայց ի՞նչ արած, որ անկարելի էղավ դոցանից և մեկը ստանալ. հարահառայալ սկսեցի տպագրությունը։ Այժմ՝ թեև գիրքը տպագրած պրծած է. դարձյալ դիմում եմ Ձեզ հատուկ խնդրելով անհապաղ կատարումն տալ իմ խնդրոյս, որով մեծապես կպարտավորեցնեմ «Տեսլյան» պատճենները այժմ էլ ինձ շատ հարկավոր են կտրելի է վերոհիշյալ հատվածը ուղածիս պես մշակելով՝ հետո առանձին հոգված հրատարակեմ Ռուսաց պարբերական թերթերից մեկի մեջ։

Ի դեպ է տեսլ այստեղ և մի թերության մասին, որ անշուշտ նկատած կլինեն շատերը, բայց որը՝ դոնե իմ կարծիքով դժվար է թերություն համարել՝ ի նկատի տոնելով առաջիկա տողերը։ Այդ «Արգավանդություն Այրարատ» հատվածն է, որտեղ մասին շատ հարեանցիկ եմ խոսել իմ գրվածքիս մեջ։ Չվիճարանելով հատվածի բնտիր եմ ճաշակով գրված լինելու դեմ, չէ կարելի առայսու ամենայնիվ չնկատել, որ նա ինքնուրույն չէ. նորա լուսնադակությունը տանուած է հորենացու պատմության 20—22 տող մի պատառիկից. և թեպետ հեղինակը՝ փոխ տոնելով այդ պատառիկը, աշխատել է տարածել, ճապաղել նորա միտքը 6—7 երեսի մեջ. բայց և այնպես շատ բառեր ու ասացվածքներ պահել են նորա ծավալած նկարագրության մեջ։ Ուստի ես ավելորդ համարեցի այժմ մատնանիշ առնել Փարսեցու այդ գողտրիկ հատվածի փոխառության մասին, թեև մի անգամ էլ կապացուցվեր նորա ծանոթ լինելը հորենացու—գրուածո հետ (Տես հորեն. Պատմ. գ. 59)։

Ձեզանից երկար ժամանակ է նամակ չունեի. չգիտեի անգամ որտեղ եք լինելու ամառը։ Վերջին շաբաթներս մի բանի մանրամասնությունը հաղորդեցին ինձ Ձեր մասին. ճեմարանիդ երկու նորավարտ ուսանող Կանոցյան և Տեր-Կարրիկյան, որք Մոսկուա էին իջել՝ Պետերբուրգ և ապա Գերմանիա ուղղվելու դիտավորությամբ։ Ի թիվ այլոց՝ նոքա հաղորդեցին, որ դուք ունեք տպագրության համար արդեն պատրաստ մի աշխատություն՝ «Եկեղեցական Մատենագրություն»²⁰։ Անշուշտ այդ լուրը ինձ մեծ ուրախություն պատճառեց և ես անհամբերությամբ սպասում եմ նորություն տեսնելուն։ Այդ մի պատվական միտք է, որո իրադրծման համար շատ բանասերներ անկեղծ շնորհակալ կլինեն Ձեզանից.— պետք է ասել, որ վերջին ժամանակները փրչացել է մեզանում կրոնական գրվածքներ կարգալու ճաշակը. և այդ խոնգարումը ճաշակի առաջացել է ոչ թե կրոնական զգացման թուլանալուց, այլ զխաղաղապես Գրոց լիզվի գործածության փոքր առ փոքր նվազելուց և ազդալին մատենագրության վերա ունեցած սխալ հայացքից։ Եկեղեցական մատենագրությունն էլ— իբրեւ եկեղեցական վերաբերյալ մի առարկա՝ անտեսում են մեր ժամանակի բանասերը, կարծես թե նա միեւնոյն ազգային մատենագրության մի հարուստ և կարեւորագույն մասը չլինեմ, առանց որո անշուշտ երբեք պիտի չլուսաբանվի և չգնահատվի ըստ արժանվոյն նույնիսկ այդ ազգ. աշխարհական, եթե մարթ է տեսլ, մատենագրությունը։— Մի կողմ թողնելով մեր նեղ եկեղեց. մատենագրություն ունեցած առաջին պատմական նշանակությունը, որը՝ այսուամենայնիվ մինչև այսօր ուսումնական

եղանակով չէ պարզած.— որքան մեծ է նորա բուն գրականական արժեքը, հեղինակների աշխարհայեցողությունը, նոցա դոգմատիքական կարծիքները, նոցա Ս. Գրոց մասին գրած մեկնությունները, զանազան «Բանբ», «Ճանք», «Քարոզք» ու «Ներբողք» նոցա պերճախոսություն ընտիր օրինակները, նոցա բանաստեղծական ավյունը, վերջապես այն բոլոր հարցու խնդիրները, որ հուզում, հետաքրքրում ու շարժում էին Քրիստոնեական եկեղեցու ամենամեծ մասեկագետներին,— այս ամենը առատությամբ արտագրում է մեր եկեղ. մատենագիտությունը:

Եկեղեցական > մատենագիտությունը առհասարակ շատ հետաքրքրական առարկա է. մանավանդ Հայոցը: Պատմության վերաբերելիք կարևորությունը որ ունի մեր եկեղեցական > մատենագիտությունը 2 տարի է, որ դրավել է ինձ և ես կամաց-կամաց նյութեր եմ ժողովում. մի գործ, որ պահանջում է բազմամյա աշխատություն և կարոտ է էջմիածնի և Վենետիկի Մատենադարանների երկարատև օժանդակության: Աստված վերջը բարի անի:

Ցանկալի էր իմանալ, ի՞նչ են անում Ձեր ընկերակից ուսուցիչները հայոց լեզվի, մատենագրության և պատմության ուսումնասիրության համար. կա՞ն արդյոք լույս տեսնելիք նոր աշխատություններ և ինչպիսի բաներ են դրանք. հաղորդեցեք խնդրեմ:

Մկրտիչ Հարությունյանցը²¹ մի պատվական երիտասարդ է երևում, որպես և կվալել Ալեքսանդրապոլցուն. երևում է որոշ նպատակով է սկսում յուր գործը. և իղեայի տեր տղա է, մի առավելություն, որից, ցավոք սրտի պետք է ասել, զուրկ է մեր ուսանողության նշանավոր մեծամասնությունը: Ինչ միայն ցավալի թվեցավ ինձ. Հարությունյանցը ընտրել է լեզվագիտական-պատմական բաժինը, մի լուր որ շատ ուրախացրեց ինձ: Բայց ինչպես հետո իմացա՝ նա շատ սակավ ծանոթ է Հայոց լեզուի և մատենագիտության, իսկ Իրեակայիլ հայ լեզվագետ կամ բանասեր առանց հայերենի, ինչպես կամեր, ես կարող չեմ: Ուստի, կարծես նույնիսկ այդ երիտասարդի օգտին խոսելով, լավ կլիներ, եթե Ձեր նամակների մեջ համոզելիք նորան տոկուն աշխատությամբ պարապել հայերենով: Նա ունի մի քանի լավ ընկերներ՝ րավականին տեղյակ հայոց լեզվին և պատմությանը: Թող ուսանի նոցա հետ՝ քանի ժամանակ կա. մի կամ երկու տարի եթե անցավ՝ այնուհետև ուշ կլինի, և ինքը վերջի վերջո փոշման պիտի մնա: Ես էլ իմ կողմանից կաշխատեմ ոչ միայն համոզել, այլև ամենայն դժվարությունները ցույց տալ հայերենը ուսումնասիրելու համար:

Նամակս չավարտած՝ Ձեզ մի խիստ հետաքրքրական լուր հաղորդեմ, որ մանավանդ ուրախառիթ է հայ բանասերի համար: Հաստատ աղբյուրից իմացել եմ որ նորերս Վ. Ղեռնդ Ալիշանը²² ստացել է Պոլսից երկու հին մադագայա գրչադիր. մեկը դրանցից Մխիթարի «Դատաստանադիր» հոգված մատյանն է՝ ինչպես ասում են հեղինակի ձեռքով գրած և մյուսը Սմբատ Գունդրատրի պատմությունը՝ Հեթում թագավորի ղեղեցական կար պատկերով՝ նույնպես ինքնագիր (original): Մանավանդ հետաքրքրական է, որ, ինչպես պատմում են, երկու նորագյուտ գրչագիրներն էլ ըստ բովանդակություն բավականին նշանավոր տարբերություն ունեն մինչև այսօր մեզ ծանոթ հիշյալ երկու մատենագրաց անունով մեզ հասած աշխատության հետ: Անշուշտ «Բագմավալար» կշտապի ավելի մանրամասն տեղեկություն տալ հայ բանա-

ոներացւոյն — Եւ չորս լմ նկատում, որ նամակս բաժնականին երկարացաւ: Ող-
տունեցեր խնդրեմ իմ կողմանէ Ձեր ընտանյաց: Կսպասեմ Ձեր նամակին, որ
հույսով եմ ամենի ընդարձակ պիտի լինի և հարուստ մեզ հետաքրքրող լու-
սերով: Լեւոսի ողջ:

Ձեր միշտ բարյացակամ Գր. Խալաթյան

1910

Հ. Գ. Եթէ Բասաւմայանցի²: Գոշի «Դատաստանագիրքը» արդեն դուրս է եկել
մամուլի տուկից՝ խնդրեմ երկու օրինակ ուղարկեք ինձ:

ՄԱՆՈՒԹԱՆԻՔԻ ԳՐԱԴԱՐԱՆ

1 «...Հարադրություններից մի բանիսը հավանաբար Գր. Խալաթյանը Կոստանյանին է ու-
ղարկել Մկրտիչ էմինի հետևյալ աշխատությունները.

Հովհաննու կաթողիկոսի Դատաստանակրտեցվո պատմություն Հայոց, Մոսկվա, 1853.

Գաղս-բա Փարպեցվո Քուղթ առ Վահան Տեր Մամիկոնից, Մոսկվա, 1853, Պատմություն
Տիեզերական, Մոսկվա, 1861:

Հետադրությունը ի վերա հայկական հետախուսության, դպրեհանձն թարգմ. Հովհաննես Պրուս-
սագի Տերսյանց, Կ. Պոլս, 1867:

Վեպր հետոյն Հայաստանի, Մ., 1850:

Ընտիր հատվածը՝ բաղնիքի ի պրոց նախնի և արդի մատենագրաց հայոց, հանդերձ բառա-
դրույթի՝ ի հայկականն ի սուսա բարբառ, Մոսկվա, 1849:

2 Էջմիածնի միաբան:

3 Խոսքը Դեղորդանի համարանում ասացացած աշակերտական ըմբոստության մասին և Կըր-
թարանի տնտեսությունը պանկանույով կրճատել կատարվող ծախսերը՝ 10—15 սովորողների դի-
շերքիկից դարձնում է իրենցից, որը առիթ է տալիս լողողների, վարչությունը ստիպված է
լինում վերականգնել նախկին վիճակը, բացառությամբ մեկ աշակերտի: 35 սովորողներ պաշտ-
պանելով վերջինիս՝ դասալրում են համարանը և ցրվում իրենց տները:

4 Ձեր խմբի — 1883 թ. Դեղորդանի համարանի շուրջը ընդդիմադիր կարծիքներ են դրանում՝
առաջադիմ, հտաղեմ խումբ: Առաջին խումբը, որի մեջ էր նաև Կ. Կոստանյանը, պահանջում էր
ընդարձակել համարանը և ավելի շատ սովորողներ ընդգրկել դպրոց, ուսուցումը մոտենցնել աշ-
խարհիկ կյանքին, լանտեսելով, իսկական, հողերը կողմը:

Երկրորդ խումբը կամենում էր ռահմանափակել կրթության վրա կատարվող ծախսերը, ու-
սույթումը տանել դուրս կրթական ուղղությամբ:

5 Նամակը հրապարակված է՝ «Երեւան», 1883 թ., X 49:

6 Ջամբու, դիմ, որ կոչի հիշատակարան արձանացուցի հայերի և պարունակող բնավից
որպեսությունը Սրբո Աթոռոյս և յուրո շրջակայից վանքերից, համաժողովյալ և շարադրյալ ի
Միմոնի ցավահար և վշտակոծ կաթողիկոսի երանցի, Վաղարշապատ, 1873:

7 Գաղսագիր — «Քուղթ սիրո և միասնության Մեծի կայսեր Կոստանյանի սիրույն Սեդ-
րեսարոսի Վիճա Պապին և Տորգատա հայոց արքայի, և որովոյն Գրիգորի հայոց լուսավորչին
շարադրյալ: (Ունեցել է մի րանի հրատարակություն. 1695, 1690, 1709, 1824 Վենետիկ):

8 Ներսես Շնորհալի, Գրիգոր որ կոչի ընդհանրականս ս. Պետրոսի, 1788:

9 Հակոբ Կարենյանց — «Քուղթ» դաշնաց, «Երեւան» 1870, № 5, էջ 179—180:

10 Անժանոթ է:

11 Անժանոթ է:

12 «Եմինյան ազգաբարկան ժողովածու» սկսել է հրատարակվել 1901 թ. Մկրտիչ էմինի կտա-
կած միջոցների հաշվին, այդ պատճառով էլ ժողովածուի անունը՝ էմինյան:

13 Մարգրեթ լույս է տեսել առանձին դրույթով, մեր որոնումները ի հայտ չբերեցին այն:

14 «Եմինյան ազգաբարկան ժողովածու» մասին է խոսքը (Մոսկվա, 1901):

15 Կոստանյան Կարապետ, Հայադիտությունը Արեւմտյան Եւրոպայում, Թիֆլիս, 1910:

16 Կոստանյան Կարապետ, Գրիգոր Մադիստոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910:

17 Տիկին Տիրուհի Կոստանյան — Կոստանյանի կինը, մանկավարժ, մշակութային գործիչ,
Թարգմանիչ:

15 Մրցանակը տրված էր Պետական խորհրդական Դանիել Գարրիեի Ժաննայանի կտակած միջոցներով. հայտարարությունը՝ «Արարատ» 1895, № 11, էջ 452:

19 Գր. Халатян. Очерк истории Армении, М., 1910 (ընտանիք):

20 Կարապետ Կոստանյանի այս աշխատությունը մնացել է անտիպ, պահվում է Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի հեղինակի արխիվում:

21 Մեզ անհայտ է ով լինելը:

22 Ղևոնդ Ալիշան (1820—1901) — մեծանուն հայագետ, աշխարհագետ, բանաստեղծ և թարգմանիչ:

23 Վահան Մ. Վարդապետ Բաստամյանց, Մխիթար Գոշ, Իրավարանական հետազոտության հանգերձ ծանոթություններ, Վաղարշապատ, 1850:

НЕОПУБЛИКОВАННЫЕ ПИСЬМА ГРИГОРА ХАЛАТЯНА КАРАПЕТУ КОСТЯНЯНУ

В. Г. ВАРДАНЯН

Резюме

Выдающийся арменовед Г. А. Халатян (1858—1912) переписывался со многими видными учеными, писателями и общественными деятелями, в том числе и Карапетом Костяняном (1853—1920).

Переписка двух ученых освещает многие стороны их жизни и деятельности.